ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ //www.competition.am

«23» 02 2022 թ.
No Կպ-385

«ՊԱՐ ՍԱՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՐԱՄ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Շահումյան 4-րդ., փ. 61)

Հարգելի պարոն Մնացականյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 22-ի ««ՊԱՐ ՍԱՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձ Սամվել Լիմինդրի Ալեքսանյանի համակենտրոնացումը թույլատրելու մասին» թիվ 63-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «5» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Մրցակցության գնահատման և վերահսկողության վարչության
Համակենտրոնացումների, պետական օժանդակության
և պետական գնումների վերահսկողության բաժին
Կատարող՝ Սրբուհի Հակոբյան,
Հեռ. (+374 60) 83-08-40 (234)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 01 ապրիլի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2022 թվականի N 63-Ա

ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի փետրվարի 22-ի նիստում, քննարկելով

համակենտրոնացումը

թույլատրելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ***<u>Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.</u>***

ընկերությունը և ֆիզիկական անձ

2022 թվականի փետրվարի 4-ին դիմում են ներկայացրել Հանձնաժողով՝ խնդրելով թույլատրել կողմից

ընկերության տոկոս բաժնեմասի ձեռքբերումը:

Հանձնաժողով ներկայացված դիմումի հիման վրա օրենքով սահմանված կարգով հարուցվել է համակենտրոնացման գնահատման վարույթ (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

2. <u>Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.</u>

<u>ընկերության մասով.</u>

Հանձնաժողով ներկայացված տեղեկությունների համաձայն՝

ընկերությունը հիմնադրվել է 2017 թվականին, իրականացնում է բնակելի և հասարակական շենքերի կառուցապատման գործունեություն:

ընկերության 2021 թվականի ակտիվների արժեքը կազմել է

հազ. դրամ, հասույթ չի ունեցել:

ընկերության միակ մասնակիցն է հանդիսանում

ընկերության կողմից 2022 թվականի փետրվարի 16-ին Հանձնաժողով ներկայացված գրության համաձայն՝ ընկերության հիմնական ակտիվն է հանդիսանում հասցեում գտնվող հողամասը: Նշված հողամասում ընկերությունը նախատեսում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի և բիզնես համալիր:
ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված գրությամբ նշվել է նաև, որ ֆիզիկական անձ և ընկերության միջև համակենտրոնացման արդյունքում վերոնշյալ համալիրի կառուցման ծրագրերում որևիցե փոփոխություն տեղի չի ունենալու:

<u>Ֆիզիկական անձ</u> ***<u>մասով.</u>***

Հանձնաժողով ներկայացված տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձ են պատկանում
ընկերության տոկոս և
ընկերության տոկոս բաժնեմասերը:
ընկերության մնացած տոկոս բաժնեմասը պատկանում է
ընկերությունը իրականացնում է ալյուրի արտադրության գործունեություն, իսկ ընկերությունը՝ հանրային սննդի կազմակերպման գործունեություն:

Հանձնաժողով ներկայացված տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձ հետ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի իմաստով անձանց խումբ հանդիսացող անձինք են՝

Հանձնաժողով ներկայացված տեղեկությունների համաձայն՝ համակենտրոնացման մասնակիցների միջև կնքվող գործարքի գինը կազմում է հազ. դրամ:

3. <u>Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>

1) ընկերությունը հիմնադրվել է 2017 թվականին, իրականացնում է բնակելի և հասարակական շենքերի կառուցապատման գործունեություն:

2) ընկերության 2021 թվականի ակտիվների արժեքը կազմել է հազ. դրամ, ընկերության ակտիվները հիմնականում կազմված են հողամասից, որտեղ համաձայն ստացված

տեղեկատվության, նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի և բիզնես համալիր:

3) ընկերության տոկոս բաժնեմասը պատկանում է

4) Համակենտրոնացման մասնակիցների միջև կնքվող գործարքի գինը կազմում է հազ. դրամ:

5) ընկերության 2021 թվականի ակտիվների արժեքը գերազանցում է Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 322-Ն որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը՝ երեք միլիարդ դրամը:

4. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.

Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ տնտեսավարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը կամ եթե ձեռք բերողին արդեն իսկ պատկանող փայաբաժնի հետ կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փայաբաժնի ձեռքբերման դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են փայաբաժին ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտը և այն տնտեսավարող սուբյեկտը, որի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում փայաբաժին է ձեռք բերվում:

Օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Օրենքի իմաստով համակենտրոնացումը կայացվում է՝

1) միևնույն ապրանքային շուկայում (հորիզոնական համակենտրոնացում),

2) որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում (ուղղահայաց համակենտրոնացում), և

3) տարբեր ապրանքային շուկաներում (խառը համակենտրոնացում):

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Օրենքի իմաստով անձնաց խումբն իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ է, որոնց միջև փաստացի առկա է փոխկապվածություն կամ վերահսկողություն, և որոնց նկատմամբ, ի թիվս այլնի, բավարարվում է հետևյալ պայմանը.

1) կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպությունում իր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության, լիազորագրի կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին:

Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խառը համակենտրոնացումը և անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը թույլատրվում է պարզեցված ընթացակարգով, եթե առերևույթ բացակայում են համակենտրոնացումը մերժելու հիմքերը:

Օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովն արգելում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը, եթե՝

1) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացման հետևանքով կանխվելու, սահմանափակվելու, արգելվելու կամ այլ կերպ վատթարանալու է տնտեսական մրցակցությունը համապատասխան ապրանքային շուկայում, կամ

2) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացումը հանգեցնելու է գերիշխող դիրքի առաջացմանը կամ ամրապնդմանը, կամ

3) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացման հետևանքով վնասվելու են սպառողների շահերը, կամ

4) համակենտրոնացման մասնակիցը չի ներկայացնում համակենտրոնացման ազդեցությունը համապատասխան ապրանքային շուկայում գնահատելու համար Հանձնաժողովի կողմից էական դիտարկվող տեղեկատվություն, և այդ տեղեկատվությունն այլ աղբյուրներից ստանալն անհնար է, կամ

5) համակենտրոնացման մասնակիցը ներկայացրել է համակենտրոնացման ազդեցությունը համապատասխան ապրանքային շուկայում գնահատելու համար Հանձնաժողովի կողմից էական դիտարկվող կեղծ տեղեկատվություն, ինչը բացասաբար է անդրադարձել Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրության ընթացքի և արդյունքների վրա:

Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համակենտրոնացումն արգելելու հիմքեր առկա չլինելու դեպքում Հանձնաժողովը թույլատրում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ ընկերության գործունեության ոլորտը բնակելի և հասարակական շենքերի կառուցապատումն է:

ընկերության ակտիվները հիմնականում կազմված են հողամասից, որտեղ, ըստ ներկայացված տեղեկատվության, նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի և բիզնես համալիր: ընկերությունը 2021 թվականին հասույթ չի ունեցել: Վերոնշյալից հետևում է, որ ընկերությունը ըստ էության որևէ ապրանքային շուկայի մասնակից չի հանդիսացել: Հետևաբար, Օրենքի 4-րդ

հոդվածի իմաստով ֆիզիկական անձ հետ անձանց խումբ կազմող՝ Հանձնաժողովի 2021 թվականի որոշմամբ նշված ընկերությունները և ընկերությունը գործունեություն չեն իրականացնում միևնույն կամ փոխկապակցված ոլորտներում (ապրանքային շուկաներում): Վերոնշյալից հետևում է, որ ֆիզիկական անձ կողմից ընկերության տոկոս բաժնեմասի ձեռքբերման գործարքը հանդիսանում է խառը համակենտրոնացում, որը չի հանգեցնի տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ այլ կերպ վատթարացմանը, սպառողների շահերի վնասմանը, ուստի համակենտրոնացումն արգելելու հիմքերը բացակայում են:

Այսպիսով, Հանձնաժողովը եզրահանգում է, որ ֆիզիկական անձ կողմից ընկերության տոկոս բաժնեմասի ձեռքբերման միջոցով խառը համակենտրոնացումը ենթակա է թույլատրման պարզեցված ընթացակարգով:

5. <u>Եզրափակիչ մաս.</u>

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 69-րդ հոդվածի 1-ին մասով, 71-րդ հոդվածով, 72-րդ հոդվածի 2-րդ մասով, 101-րդ հոդվածի 1-ին մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թույլատրել ընկերության և ֆիզիկական անձ համակենտրոնացումը՝ ֆիզիկական անձ կողմից ընկերության կանոնադրական կապիտալում տոկոս բաժնեմասի ձեռքբերման միջոցով:
2. Սույն որոշումը համապատասխանաբար ուժի մեջ է մտնում դրա պատճենը ընկերությանը և ֆիզիկական անձ հանձնելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը գործում է մեկ տարի ժամկետով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը (կատարումը):

ՆԱԽԱԳԱՀ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. փետրվարի 22
Երևան